ԿՐԿՆԱՀՆՉՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայերենի հնչույթային մակարդակում կրկնության դրսևորումներից մեկը կրկնահնչյունությունն է՝ միևնույն հնչյունի կրկնությունը բառակազմում, որը գրավոր խոսքում արտահայտվում է կրկնագրությամբ կամ երկգրությամբ: Կրկնահնչյունության ժամանակ նույնն են լինում կից հնչյունները, իսկ կրկնագրության դեպքում՝ կից տառերը:

Քանի որ բառի մեջ կրկնվում են թե՛ ձայնավորները և թե՛ բաղաձայները, ուստի կրկնահնչյունությունն ունի երկու արտահայտություն՝ կրկնակ ձայնավորներ և կրկնակ բաղաձայններ: Իհարկե, ոչ բոլոր ձայնավորները և ոչ բոլոր բաղաձայններն են կրկնվում: Գործառական հաճախականության տեսակետից էլ բառակազմում բաղաձայնների կրկնությունն ավելի հաճախադեպ է, իսկ ձայնավորների կրկնությունը սակավ ընդգրկում ունի:

1. ԿՐԿՆԱԿ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐՈՎ ԲԱՌԵՐ

Ընդհանրապես կրկնահնչյունությունը կապված է տվյալ հնչյունի երկար արտասանության հետ: Եվ քանի որ հայերենը ձայնավորների տևական արտասանություն կամ ,,երկար ձայնավորներ,, (1, էջ 133) չունի, ուստի կրկնակ ձայնավորների գոյությունը հայերենին բնորոշ երևույթ չէ: Կրկնակ ձայնավորները մասնավորապես առկա են՝

ա/ մի քանի փոխառյալ բառերում. ինչպես՝ *կոոպերացիա, կոոպերատիվ, կոորդինացիա* և այլն:

բ/ բառաբարդման կամ բառածանցման ժամանակ, երբ նախորդ բաղադրիչն ավարտվում, և հաջորդ բաղադրիչը սկսվում է միևնույն ձայնավորով. ինչպես՝ *ամենաարագ, ամենաազնիվ, լիիմաստ, լիիրավ, հակաառաջադիմական* և այլն:

Այս երկու դեպքերում էլ կրկնվող ձայնավորներն արտասանվում են միջինչյունային անջատող հորանջով: է/ե/ ձայնավորի կրկնության դեպքում հորանջը հաղթահարվում է անցումային կիսաձայնով. ինչպես՝ *հրեերեն, կորեերեն* և այլն:

Բարդման կամ ածանցման ժամանակ երբեմն էլ ձայնավորի կրկնությունը վերանում է նրա կրճատմամբ՝ արտասանության բարեհնչյունու-

թյան պահանջով. ինչպես *հնչա+արտաբերական > հնչարտաբերական, շրթնա+ատամնային > շրթնատամնային* և այլն:

գ/ բացականչական երանգով կոչականի կազմում, երբ այն ավարտվում է ձայնավորով, և վերջինիս երկար արտասանությունն ստեղծում է կրկնահնչյունություն: Այստեղ բացականչական հնչերանգի կրողը լինում է մեծ մասամբ կոչականի կրկնյալ ձայնավորը. ինչպես՝ «Համզե Պչուկը ոտքը շեմից ներս դնելու հետ կանչեց. - *Դավո՜ռ,* ավեր տուն կերթա՞ս... » (ՄԳՁՄ, 210): «*Խալե՜ե,*- բրիգադիրը կանչում էր, հա կանչում (ն.տ., 253):

Նմանապես կոչականի վերջին ձայնավորը կրկնվում է նաև երկու, երեք կամ չորս անգամ, երբ տվյալ բառավերջն ավելի երկար է արտասանվում: Այս դեպքում տրամաբանական շեշտադրումն ընկնում է մեծ մասամբ վերջի կամ նախավերջի կրկնվող ձայնավորի վրա. ինչպես՝ «Ապա անհանգիստ շարժվում է ու կանչում.

- *Մոսեե՜ե...* դու դեպ Թուխ Մանուկ կերթաս, չէ՞(ՄԳՁՄ,160) : «- Ալեե՜, հայացքը հորիզոնին կանչում էր ծերունին, Ալե՜, իմ հոգին, *Ալեեե՜ե...*» (ն.տ., 174):

դ/ կոչական ձայնարկության մեջ, երբ բառավերջի կամ բառամիջի ձայնավորն արտաբերվում է բացականչական հնչերանգով և, դրանով պայմանավորված, ունենում է տևական արտասանություն. ինչպես՝ «-*Օխաա՜շ,* ափով սրբեց բեղերը: - Իմ սիրտն հովցավ...» (ՄԳՁՄ, 171) «- *Վա՜յե՜ե,* - ափսոսաց Օսոն, բայց չհավատաց» (ն.տ.,114): «*Հայլեեե՜.*— հայրս տմտմբացրեց գլուխը և փորձեց ավելի հարմար նստել» (ն.տ., 157) «- *Հրիիի՜ի,* ծմերուկ, - երգեցիկ կանչեց հիթենքցի Մոսեն» (ն.տ., 217):

Սակավադեպ ձայնավորի կրկնահնչյունությունը հատկորոշվում է շարահյուսական միևնույն կառույցում կոչականի մեջտեղում միևնույն ձայնավորի և կոչական ձայնարկության վերջում երկու տարբեր ձայնավորների միաժամանակյա կրկնությամբ. ինչպես՝ « Շտկվեց, ձգվեց... և, որքան շունչը հերիքում էր, կանչեց.- *Հրրիիիի՜, Ալեեե՜ե* ... Ալե՜ե,- հայացքը հեռու լեռներին՝ հա՜ կրկնեց,- *Ալեե՜ե...*» (ՄԳՁՄ,170):

Հարկ է նշել, որ թե բուն կոչականի և թե՝ կոչական ձայնարկության մեջ ձայնավորի կրկնությունը սոսկ իրավիճակային է՝ բացականչական հնչերանգով պայմանավորված. խոսքից դուրս այդ բառերը կրկնահնչյուն չեն:

2. ԿՐԿՆԱԿ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐՈՎ ԲԱՌԵՐ

Հայերենում կրկնահնչյունությունն արտահայտվում է հիմնականում կրկնակ բաղաձայնների ձևով: Սա բառի մեջ միևնույն տեղում բաղաձայնի

երկու /կամ երկուսից ավելի/ անգամ արտահայտվելն է, որը հատկորոշվում է տվյալ բաղաձայնի երկար արտասանությամբ: Կրկնակ բաղաձայններով բառերում ավելի հաճախ տեղի է ունենում արտաբերական երկու դրվածքների նախորդի ելքի և հաջորդի մուտքի ծուլում: Բաղաձայնի տևական արտասանությունը գրավոր խոսքում արտահայտվում է կրկնատառ ձևով: Մեծանուն հայագետ Հր. Աճառյանն այս մասին գրում է. ,,Կրկնակ բաղաձայնները */պպ,փփ,տտ,ննն* և այլն/ ուրիշ բան չեն, եթե ոչ երկար բաղաձայններ, որոնց մեջ կա մի պայթուցում և մի պայթյուն, իսկ կացքի ժամանակ կամ լռություն և կամ ձայնի երկարում,, (1, էջ 563):

Կան լեզուներ /կաբարդիներեն, քրդերեն և այլն/, որոնցում բաղաձայնների կրկնությունը խիստ բնորոշ երևույթ է, կան նաև բաղաձայնների կրկնությունից խուսափող լեզուներ / հին իռլանդերեն, հին պարսկերեն, նոր հունարեն, ռուսերեն և այլն/: Լեզուների մեջ բաղաձայնների կրկնությունը պայմանավորված է լինում տարբեր գործոններով: Աճառյանը դա բացատրում է երեք պատճառներով, գրելով. ,,Բաղաձայնների կրկնությունն առաջ է գալիս երեք պատճառներից. 1. որոշ ձայնաբանական պայմաններից, 2. միջանկյալ ձայնավորի սղումից՝ իմաստին սաստկություն տալու համար, 3. նույն բաղաձայնով վերջացող և նույն բաղաձայնով սկսվող երկու տարբեր բառերի բարդությամբ,, (1, էջ 564): Այս երեք գործոնները տարբեր լեզուներում տարբեր չափի դերակատարություն ունեն: Հայերենում դրանցից գործում են առավելապես երկուսը միջանկյալ ձայնավորի սղումը և բառաբարդման տեխնիկան: Ընդսմին, միջանկյալ ձայնավորի սղումով կրկնակ բաղաձայնների առաջացումը ավելի գործուն երևույթ է: Ինչպես նկատում է Հր. Աճառյանը, բառամիջում *ի* և *ու* ձայնավորների «անկումով ստանում ենք շատ հաճախ կրկնակ բաղաձայններ. ինչպես՝ *ուղիղ – ուղղակի, ուղղական, ուղղափառ. գնուծ-գննիմ, գննակերպ, գննագույն. կնիծ-կնծի, կնծություն* և այլն» (1, էջ 565): Բերենք նմանատիպ այլ օրինակներ՝ *հովիվ- հովվի, բջիջ-բջջանյութ, սեղմում-սեղմման* և այլն:

Նշենք նաև, որ միջանկյալ ձայնավորի սղումով առաջացած բաղաձայնական կրկնությունն արտահայտում է սաստկական նշանակություն: Աճառյանն այս օրինաչափությունն առավել բնորոշ է համարում մեր բարբառներին և իբրև օրինակներ վկայակոչում է Ղարաբաղի բարբառում *մատտա՜ղ* /,,սիրելիս"/, *վազզել* /,, արագ վազել, շուտ վազել"/, Երևանի բարբառում *ուռռացնել* / ,,մի փոքր բան մեծացնել"/ և այլ բառեր (տես 1, էջ 566): Նմանապես գրական

հայերենում էլ «ապո՞ւշ, հիմա՞ր և նման բառեր սաստկության համար... հաճախ արտասանում ենք *ապպո՞ւշ, հիմմա՞ր*»(1, էջ 566):

Ինչ վերաբերում է բաղաձայնով վերջացող և նույն բաղաձայնով սկսվող բառերի և հատկապես արմատների միավորմամբ կրկնակ բաղաձայնների երևան գալուն, ապա պետք է նշել, որ դա հայերենին խիստ բնորոշ չէ, քանի որ, «նման դեպքերում ներմուծվում է *ա* հոդակապը. ինչպես՝ *սրտատրոփ, մեծածախ, լայնանիստ* և այլն: Այնուամենայնիվ ունենք *ան* մասնիկով *աննպաստ, աններող, նույնիսկ աննջելի* / երեք *ն*-ով/: Արևմտյան աշխարհաբարում և բարբառներում հոդակապի բացակայությամբ՝ *պատտակ, լայննալ, երկննալ, լմննալ, հիննալ* և այլն»(1, էջ 565):

Սրան նմանվում է կապակցության մեջ իրար հաջորդող երկու բառերի արտասանական կցույթը, երբ նախորդ բառը վերջանում, և հաջորդը սկսվում է միևնույն բաղաձայնով . ինչպես՝ մոր*ս տ*երը, նույ*ն ն*ապարը և այլն:

Բացի հիշյալ երկու դեպքերից, հայերենում կրկնակ բաղաձայններ առաջանում են նաև՝ ա/ փոխազդեցական հնչյունափոխության հետևանքով. ինչպես՝ օրորան>*օրրան*, այլն,

բ/ արմատների կցումով համադրական բարդություն կազմելիս. ինչպես՝ *երես + սրբիչ > երեսսրբիչ, հարավ + վիետնամական > հարավվիետնամական, երկու + կողմ > երկկողմ* և այլն,

գ/ բառակազմում *վ*-ից հետո կրավորական ածանցի հավելման դեպքում. ինչպես՝ գրավել - *գրավվել*, նզովել- *նզովվել*, ապահովել- *ապահովվել* և այլն,

դ/ *ն* վերջնահնչյուն ունեցող բառերը *ն* որոշիչ հոդ ստանալիս. ինչպես՝ *կինն ու երեխան, տունն է* և այլն,

ե/ բնաձայնական կազմություններում. ինչպես՝ *բզզալ, դժժալ, ճռռալ, մկկալ, կտտոց* և այլն:

Այսպիսով, բառակազմում բաղաձայնների կրկնությունն ունի որոշակի ընդգրկում և հիմնականում հետևանք է հնչյունափոխության, բառաբարդման կամ ածանցման: Ամփոփելով ասվածը՝ կարող ենք նշել, որ հայերենում կրկնաբաղաձայնությունն ունի հետևյալ դրսևորումները.

1. կրկնաբաղաձայն բնիկ հայերեն բառերն են՝ *անդորր, բերրի, տարր, մրրիկ, օրրան, ինն, իննսուն, երրորդ, չորրորդ* և այլն,

2. կրկնաբաղաձայն ունեցող որոշ բառեր փոխառություններ են. ինչպես՝ *մաստա, կաստա, տոննա* և այլն.

3. կրկնակ բաղաձայն ունեն մի քանի հատուկ անուններ. ինչպես՝ *Աննա, Էմմա, Վիեննա, Ռաֆֆի, Պիննոս, Օվսաննա* և այլն.

4. «Մեծ մասամբ հնչյունափոխության հետևանքով *բբ, գգ, դդ, զզ, թթ, ժժ, լլ, խխ, ծծ, կկ, ղղ, ճճ, նն, ղղ, պպ, ջջ, ռռ, սս, վվ, տտ, ցց, ֆֆ* կրկնատառեր են առաջանում մի շարք բառերում՝ հատկապես բառասկզբին, թեև հաճախ նրանց միջև լսվում է *ը*. օրինակ՝ *բբոեճ, գգվել, դդում, զզվել, բզզալ, թթու, փթթել, բժժանք, կլլել, սովալլուկ, լլկել, խխել, խխմել, խխունջ, ծծան, կծծիություն, ծծել, կկոցել, կկղել, կկու, անուղղա, ուղղագրություն, խճճել, ճճի, զննել, ննջել, քննել, ղղուկ, ղղմել, ղղնջյուն, ղղունջ/* բնաձայն/, *պպզել, ջջղել, բջջի, ճռռան, սսկվել, հովվական, ապահովվել, նզովվել, խորովվել, ցցուն, կեցցե, կտտանք, տտել, տտիպ» (2, էջ 17)* (ընդգծումը մերն է՝ Ա.Կ.),

5. *Ն* բաղաձայնի կրկնություն է առաջանում երկու դեպքում՝ ա/ *ն* -ով վերջացող բազմավանկ բառերի հոգնակին կազմելիս. ինչպես՝ դասարան- *դասարաններ*, նստարան-*նստարաններ* և այլն, և բ/ *ան* ժխտական նախածանցը *ն* - ով սկսվող արմատին միանալիս. ինչպես՝ աններելի, *աննման* և այլն:

6. Ս, դ, ն բաղաձայններով վերջացող բառերը *ս,դ,ն* դիմորոշ հոդեր ստանալու դեպքում ունենում են համապատասխան կրկնակբաղաձայններ. «ինչպես՝ *բոյսս* / այս բույսը/, *բուրդդ* /այդ բուրդը/, *տուննն, ծուկննն* /այդ տունը, այդ ծուկը/. *ս* վերջացող բառերը հոգնակի հայցականում կունենան երկու *ս* / *զբոյսս*, զյոյսս « բույսերը, հույսերը»/, որոնք եթե *ս* դիմորոշ հոդ էլ ստանան, կունենան եռյակ *ս*. ինչպես՝ *զմիսսս* /,,այս մսերը"/, *զբոյսսս* / ,,այս բույսերը"/» (1, էջ 568):

Ինչպես երևում է բերված շատ օրինակներից, կրկնաբաղաձայնների միջև հաճախ լսվում է ը ձայնավորը՝ կազմելով գաղտնավանկ / *խխունջ, ծծան, գգվել* և այլն/:

Հր. Աճառյանը վկայակոչում է կրկնակբաղաձայններով բառերի ցանկը հայերենում՝ թվով 123 բառ, որոնց մի զգալի մասը բնաձայնական բառեր են (տե՛ս 1, էջ 568):

Օգտագործված գրականություն

1. Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Երևան, 1971:
2. Ա. Ղարիբյան, Գ. Պարիս, Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց, Երևան, 1957:

Համառոտագրություններ

ՄԳՀՄ – Մ.Գալշոյան, Հորի Միրոն, Երևան, 1983:
Ն.Տ.- նույն տեղը: